ազնիւ ընծայ չքանչան արծիւ երկգլխի, զոր 'ի գիրս կոչեն զայն Եպկոր։

Առաւել նեղեալ Պետրոսի և չգտեալ հանդիստ կենաց 'ի բռնութենէ այլազգեաց և 'ի չքաւորութենէ, ել և գնաց 'ի Ցոսպէ, ուր էր բանակն Արքունի, յոտս մեծի Վէզիրին (1800 · 'ի 11 Մայիսի) գտանել օգնութիւն 'ի նմանէ, ձեռընտուութեամբ առն բարեպաշտի Անտոն Ամիրայի։

Իսկ միաբանք Ցունաց, որք յԵրուսաղէմ, անկան 'ի կասկածանս, թէ գնաց Պատրիարքն Հայոց աղաչել զեպարքոսն առնուլ 'ի ձեռաց Ցունաց զսեղանն յԱյրին Ծնընդեան Քրիստոսի 'ի Բեթղեհէմ եւ զԳողգոթայն · վասն այսորիկ սկսան երկնել 'ի միտս իւրեանց հասուցանել չարիս Հայոց, որպէս և արարին իսկ · զորմէ գրեսցուք։

Եւ մինչդեռ Պետրոս եպիսկոպոս դեգերէր 'ի Ցոսպէ առ Վէզիրն եւ առ այլ մեծամեծս, եհաս նմա հիւանդութիւն և անկաւ 'ի մահիճս, և չգտեալ դարման 'ի բժշկաց՝ վախճանեցաւ անդ (1800 · Ցունիս 18) երկուշաբթի, ժամ 9, եւ թաղեցաւ 'ի դերեզմանատան հասարակաց՝ թողեալ 'ի սուգ և 'ի տրտմութիւն զմիաբանս վանաց Ս · Յակոբայ, որ եւ յետոյ 1837, փոխադրեցան ոսկերք նորա 'ի գաւիթ եկեղեցւոյն։

Զեւ եւս սրբեալ միաբանաց զարտասուս յաչաց, եհաս հրաման 'ի մեծէ Վէզիրէ փութալ 'ի բանակն փոխանորդաց և թարգմանաց Հայոց և Ցունաց · Պետրոս եպիսկոպոս Փոխանորդն եւ Թարգմանն, ընկերացեալ Ցունաց դնացին անդ։ Եւ եղեւ իբրեւ յանդիման եղեն նմա, լուան զասաս բարկութեան նորին, և փոքու իմն պատահիլ ունէին պատուհասի · խնդրեաց 'ի նոցանէ սատար լինիլ բանակին · զի թշնամիք կողոպտեալ և մերկացուցեալ էին, և պահանջէր յերկուց վանաց 2000 քսակս արծաթոյ · և նոցա անկեալ յոտս նորին պաղատէին և յայտ առնէին զյետին չքաւորութիւն եւ զերկամեայ տառապանս իւրեանց զոր կրեցին · զկնի բազում բանից և աղաչանաց, զիջաւ սակաւ ինչ Վէզիրն 'ի ցասմանէ իւրմէ · բայց սակայն զնոսա անպատճառ հասուցանել 'ի բանակն 1000 քսակ։ Դարձ արարեալ սոցա յԵրուսաղէմ, յայտ արարին զիրս միաբանաց · և զի յայնմ ժամանակի ոչ միայն չգտա-